



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 1
ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2022 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Գիտխորհրդի 2022-23 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. Ուսումնական տարվա սկսման հետ կապված հարցեր:
3. Աշխատանքային կարգապահական խնդիրների քննարկում /ուսանողների հաճախումները ստուգող ժամանակավոր հանձնաժողովի ստեղծում/:
4. <<Խ. Պայլանի>> անվան կրթաթոշակի թեկնածուի հաստատում:
5. Հայ բանասիրության ֆակուլտետի ժամանակակից հայոց լեզու և հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն ամբիոնների կողմից ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմաների հաշվետվություն:
6. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Այնուհետև պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ համալսարանական ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ գիտխորհրդի անդամ 2 ուսանողների /Սամվել Եղիազարյան և Հովհաննես Հովակիմյան/ անդամակցությունը գիտխորհրդի աշխատանքներին դադարեցվել է և նրանց առաջիկայում կփոխարինեն նոր անդամներ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի քարտուղար դոց. Ա. Գալստյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2022-23 ուստարվա աշխատանքային ժամանակացույցը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ ուսումնական տարին մեկնարկել է բնականոն, բոլոր դասերը կայանում են նախատեսված ժամակացույցով: Դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց նաև, որ ԵՊՀ էլեկտրոնային համապատասխան հարթակում բոլոր դասընթացների օրացուցային պլանները չէ, որ տեղադրված են, և խնդրեց ամբիոնների վարիչներին այդ հարցում ուշադիր լինել և դասախոսներից պահանջել, որ սահմանված ժամկետներում բոլոր նյութերը տեղադրվեն և հասանելի լինեն ուսանողներին:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ուսանողների հաճախումների պատկերը առանձին կուրսերում բավականին վատ է, առանձին դեպքերում որոշ դասախոսներ ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքին և գիտխորհրդին առաջարկեց ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որը առաջիկայում կգրադվի հաճախումների հետ կապված հարցերով: Պրոֆ. Ա. Ավագյանի առաջարկով այդ հանձնաժողովում մեկական անդամներ կառաջադրեն ամբիոնները, արհկոմիտեն և դեկանատը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, նախորդ ուստարում ֆակուլտետում <<Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի>> աջակցությամբ գործել է <<Խորեն Պալյանի>> անվան կրթաթոշակ, սակայն ուստարվա առաջին կիսամյակի վերջում ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով անվանական կրթաթոշակ ստացող ուսանողը զրկվել է այդ կրթաթոշակից և հիմնադրամի կողմից դադարեցվել է ֆինանսավորումը: Այժմ հիմնադրամը վերականգնում է այդ կրթաթոշակը, և ֆակուլտետը առաջարկում է այդ կրթաթոշակը հատկացնել բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Անգելինա Արմանի Հայրապետյանին, որը բավարարում է անվանական կրթաթոշակի համար ներկայացվող պահանջներին: Գիտխորհուրդը միաձայն բաց քվեարկությամբ հաստատեց որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորմամբ ֆակուլտետում իրականացվում են երկու գիտական թեմաներ, որոնք գիտխորհրդին են ներկայացնում իրենց հաշվետվությունը: <<Արդի արևելահայերենի քերականական ուսումնական բառարան>> գիտական թեմայի դեկավար բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յու. Ավետիսյանը մասնավորապես նշեց, որ թեմայի իրականացման առաջին երկու եռամսյակները եղել են աշխատանքները

համակարգելու ժամանակահատվածներ: Այս ընթացքում կատարվել են նյութերի հավաքում, մշակում: Վերջին երկու եռամսյակում կատարվել է հավաքված նյութի դասակարգում: Հնարավորինս օգտակար և ճշգրիտ արդյունք ստանալու նպատակով կազմակերպվել են նեղ մասնագիտական քննարկումներ, լսումներ, կատարվել են առաջարկություններ, դիտարկումների վերլուծություն: Պարզաբանվել են առավել տարածված տարբերակները, հետազոտության ընթացքում ծագած խնդրահարույց հարցերը: Ի մի է բերվել հետազոտության ընթացքում ամբարված նյութը, ճշգրտվել են կանոնարկվելիք կոնկրետ իրողությունները:

Հեղինակային խումբը սկսել է նաև «Արդի հայերենի քերականության հիմնախնդիրներ» խորագրով հանրապետական գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները: Գիտաժողովը տեղի կունենա ս. թ. հոկտեմբերի 22-23-ը: Զեկուցումները կտպագրվեն թեմայի իրականացման հաջորդ տարում՝ համաձայն օրացուցային պլանի:

Հեղինակային խումբը սկսել է նաև բառարանակազմության աշխատանքները: Որոշակի հստակեցվել են բառարանի կազմության սկզբունքները, կառուցվածքը: Ներկայումս նկարագրված է մոտ 800 բառային միավոր:

Թեմայի առնչությամբ առայժմ տպագրվել է 3 հոդված:

Գիտական ուսումնասիրությունը կատարելու համար լուրջ խոչընդոտներ չկան. թերևս հիմնական խնդիրը ընտրված նյութի հարստությունն է, թեմայի բազմալորտ և տարաշերտ բնույթը:

«Գրաբարը որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմայի /01.10.2021-30.09.2022/ ղեկավար բ. գ. դ., պրոֆ. Աննա Աբաջյանը մասնավորապես նշեց.

«Գրաբարը որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» թեմայի շրջանակներում ըստ հաստատված օրացուցային եռամսյակային պլանի՝ կատարել ենք նախատեսված հիմնական աշխատանքները: Առաջին տարվա համար սահմանված աշխատանքի ուղղվածությունը վերաբերում է գրաբարով ավանդված գրական երկերից այնպիսի բառերի, դարձվածքների, կայուն կապակցությունների, հարադրությունների, տերմինային դարձած բառակապակցությունների դուրս գրմանը, որոնք ժառանգել է արդի գրական արևելահայերենը: Արևելահայերենում դրանց ամրակայման ապացույցը նման բառերի և միավորների առկայությունն է արևելահայերենի տպագիր և առցանց հիմնական բառարաններում:

Հետազոտական աշխատանքը կատարել ենք հետևյալ փուլերով.

Ա. Իբրև սկզբնաղբյուր ընտրված 5-11-րդ դարերի ինքնուրույն գրաբարյան մատենագիտության աղբյուրները, հիմնականում պատմագիտական, մեկնողական և դավանաբանական աշխատությունները բաժանել ենք կատարողների միջև: Քարտագրման համար հիմք են ծառայել բուն բնագրերը, նրանց առկա համաբարբառները դիտարկել ենք իբրև օժանդակ գործիքներ:

Յուրաքանչյուր երկի բառապաշարի կենսունակ, արդիհայերենյան դարձած միավորները քարտագրել ենք՝ ուշադրություն դարձնելով այդ բառերի թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլանների պահպանվածությանը կամ փոփոխություններին: Ըստ այդմ՝ արձանագրել ենք հետևյալ հնարավոր տարբերակները.

1) Գրաբարյան միավորները նույնությամբ պահպանել են իրենց և՛ արտահայտության և՛ բովանդակության: Նշենք, որ նման բառեր և արտահայտություններ թեև կան, բայց զգալի չեն,

2) գրաբարյան միավորները նույնությամբ պահպանել են իրենց արտահայտության և՛ բայց փոխել են բովանդակությունը, բովանդակության փոփոխությունն արտահայտվել է իմաստափոխության տարբեր տիպերով՝ իմաստի ընդլայնումից, նեղացումից մինչև շրջում: Քննության ընթացքում պարզ դարձավ, որ նման միավորներն ամենամեծաթիվն են, այսինքն՝ ժառանգված գրաբարյան բառաձևերը հիմնականում պահպանել են իրենց արտաքին հնչյունական կազմը, բայց արդիականացրել են իրենց բովանդակությունը՝ ըստ ժամանակի պահանջների, իմաստափոխության բացահայտված ձևերը հիմնականում վերաբերում են իմաստի նեղացմանը, երբեմն՝ ընդլայնմանը, իմաստի շրջման դեպքերը գերսակավ են:

3) Գրաբարյան բառաձևերը նույնությամբ պահպանել են իրենց բովանդակության և՛ բայց փոխել են արտահայտության և՛ պլանը: Արտահայտության պլանի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են պատմական հնչյունափոխության դեպքերով, բառակապակցական միավորների պարագայում նաև ձևաբանական տեղաշարժերով՝ հոլովիչների, հոգնակիակազմության, բայերի խնդրառության փոփոխություններ: Նման տարբերակի միավորները միջին դիրք են գրավում:

Գրաբարյան միավորների բառիմաստների ճշգրտման համար իբրև հիմք ընդունել ենք նախ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատությունը (Գ. Աւետիքեան, Խ. Սիրմէլեան, Մ. Աւգերեան, Վենետիկ, 1836, 1837), ապա՝ «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր», (Լ. Հովհաննիսյան, Երևան, 2010), «Նորայայտ բառեր գրաբարում» (Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Երևան, 2007): Արդի արևելահայերենի տպագիր բառարաններից նախապատվություն ենք

տվել էր Աղայանի բառարանին՝ «Արդի հայերենի բացատրական բառարան», պարունակում է 135600 բառ և 11000 դարձվածաբանական միավոր, Երևան, 1976, ինչպես նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանին», հհ. 1-4, Երևան, 1969-1980: Օգտվել ենք նաև <https://bararanonline.com/-hg>, ինչպես նաև <http://www.nayiri.com/search?l=en> կայքի բառարանային պաշարներից: Բառերի քարտագրման և ընդհանուր շտեմարանի կազմության ընթացքում օգտվել ենք նաև արդի հայերենի բառապաշարի տարբեր ոլորտներն ընդգրկող մի շարք այլ բառարաններից, ինչպես՝ **Մայխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, հհ.1-3, 1944, հ.4, 1945, **Ասլանյան Ս.Ա.**, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Երևան հրատ., 1991, **Էլոյան Ս.Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002, **Պետրոսյան Հ.Զ.**, **Գալստյան Ս.Ա.**, **Ղարազյուլյան Թ.Ա.**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, **Մանուկյան Ա.Ս.**, **Տիոյան Ս.Կ.**, Կենդանիների անունների համառոտ բառարան, Երևան, 2001 և այլն:

Բ. Քննության ենթակա բառային միավորների, կապակցությունների, հարադրությունների և տերմինների ճշգրտում ենք կատարել դասական և հետդասական շրջանի թարգմանական գրականության աղբյուրներից, ընդ որում իբրև սկզբնաղբյուր դիտարկել ենք և՛ ասորերենից, և՛ հունարենից գրաբար թարգմանված տարբեր բովանդակության երկեր, հիմնական առավելությունը տվել ենք դավանաբանական, փիլիսոփայական և քերականական երկերին: Այս շարքում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում նախահունաբան և հունաբան շրջանների թարգմանական երկերը, որոնք չափազանց հարուստ են գիտության ամենատարբեր ոլորտներում այժմ կիրառական դարձած տերմինային նորակազմություններով: Թարգմանական երկերից քաղված միավորները քննել ենք վերը նշված սկզբունքներով, արդյունքները բաշխվում են նույն երեք հնարավոր տարբերակներով՝ կապված արտահայտության և բովանդակության տեղաշարժերի կամ նույնականության հետ:

Գ. Քարտագրումից և վերոնշյալ հաջորդական քայլերով ստուգումներից հետո տարակարծություններ առաջացնող միավորները հավաքել ենք և ըստ օրինակների քննել ընդհանուր խորհրդակցություններով, որոշել դրանց ընտրության սկզբունքները, պարզաբանել վիճահարույց հարցերը, փաստարկված արձանագրել դրանք մեր միասնական շտեմարանում: Քարտագրումից և վիճահարույց խնդիրների որոշումից հետո հավաքված բառային միավորները համաժամանակյա և տարժամանակյա մոտեցմամբ բնութագրելուց հետո բացահայտել ենք գրաբարից մինչև արդի գրական արևելահայերեն ընկած ժամանակահատվածում հայերենի բառապաշարի տարբեր շերտերում արձանագրված տեղաշարժերը, որոնք լեզվակիրների մտածողության և աշխարհընկալման փոփոխությունների հետևանք են: Յուրաքանչյուր փուլից հետո

ստացված արդյունքները ներկայացրել ենք հոդվածների, զեկուցումների և հաղորդումների տեսքով:

Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող երկու թեմաների հաշվետվությունները, քանի որ դրանց կատարման ընթացքը համապատասխանում է ներկայացված օրացուցային պլաններին:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թվանշի, թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Բ Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ամբիոնը Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ արդեն ունի 2 առկա ասպիրանտ, հետևաբար ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ասպիրանտի ցանկությամբ նպատակահարմար է գտնում փոխել Հովհաննես Հովակիմյանի մասնագիտության թվանիշը՝ գրականության տեսության մասնագիտության թվանշով՝ Ժ. 01.04 - «Գրականության տեսություն»: Առաջարկվեց նաև հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Պատմվածքի ժանրային ձևափոխումները 20-րդ դարի 70-80-ականների արևելահայ արձակույմ» վերնագրով՝ գիտական ղեկավար առաջադրելով բ. գ. թ., դոց. Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի առկա ասպիրանտ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանի Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» թվանիշը փոխել Ժ.01.04. - «Գրականության տեսություն» մասնագիտության թվանիշով:

2. Հաստատել թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Պատմվածքի ժանրային ձևափոխումները 20-րդ դարի 70-80-ականների արևելահայ արձակույմ» վերնագրով:

3. Գիտական ղեկավար նշանակել բ. գ. թ., դոց. Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Վաչագան Վարազդատի Ավագյանին** Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու թույլտվություն տալու հարցը:

Ա Բ Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը 2015-ից աշխատում է ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնում: Ուսանողները գոհ են նրա դասախոսական աշխատանքից, և սոցիալաբոլոգների գնահատականը 4,7 է: Նա քաջաձանոթ է գրականագիտության նվաճումներին, բովանդակալից զեկուցումներով մասնակցում է հանրապետական ու միջազգային գիտաժողովներին: Դոց. Վ. Ավագյանը գիտական պարբերականներում հրատարակել է 36 գիտական հոդված: Վերջին 5 տարիների հրատարակումներից 16-ը տպագրվել են ԲՈԿ-ի ցանկի պարբերականներում: Դոց Վ. Ավագյանը բարեխիղճ ու բանիմաց, պատրաստակամ մասնագետ է և կարող է ղեկավարել ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Նկատի ունենալով, որ ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում, ԱՊՀ-ում զգացվում է հայ գրականության մասնագետների կարիք, միջնորդել ֆակուլտետի գիտական խորհրդին՝ դիմելու ռեկտորատին և ԲՈԿ-ին՝ դոց. Վ. Ավագյանին տալու Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու իրավունք:

Գ/ ԼՍԵՑԻՆ – Հայ բանասիրության ֆակուլտետի 2007 թ. շրջանավարտ Աննա Գագիկի Ալավերդյանին հայոց լեզվի ամբիոնում հայցորդ ձևակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց.դոց. Ա. Տեր-Սինասյանը, Ա. Սարգսյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Աննա Ալավերդյանը 2001 թ. ընդունվել և 2007 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը, 2007-2009 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում ¥ «Արտասահմանյան գրականություն և գրականության տեսություն»^Բ մասնագիտացմամբ: 2012 թվականից աշխատում է որպես հայոց լեզվի դասախոս Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում: Գրել է «Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի>> վեպի խոսքարվեստը» թեմայով ռեֆերատ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աննա Գագիկի Ալավերդյանին հայոց լեզվի ամբիոնում ձևակերպել հայցորդ ¥ Ժ.02.01 <<Հայոց լեզու>> մասնագիտությամբ^Բ:

դ/ ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Աննա Գագիկի Ալավերդյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Արտ. Սարգսյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Աննա Ալավերդյանը 2001 թ. ընդունվել և 2007 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատը, 2007-2009 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում ¥ «Արտասահմանյան գրականություն և

գրականության տեսություն» մասնագիտացմամբ: Գրել է «Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի>> վեպի խոսքարվեստը» թեմայով ռեֆերատ:

Աննա Ալավերդյանը ձևակերպվել է հայցորդ հայոց լեզվի ամբիոնում **ՖԺ.02.01** <<Հայոց լեզու>> մասնագիտությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Աննա Ալավերդյանի ատենախոսության թեմա հաստատել <<Շահան Շահնուրի գեղարվեստական արձակի լեզուն>> **ՖԺ.02.01** <<Հայոց լեզու>>:

2. Աննա Ալավերդյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. ղ., պրոֆ. Յուրի Ավետիսյանին:

ե/ **ԼՄԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Ֆ**առկա ուսուցում, 1-ին կուրս **Գ**այանե Գեղամի Դալլաքյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց.դոց. Ա. Տեր-Մինասյանը, Ա. Սարգսյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Գայանե Դալլաքյանը 2022 թ. ավարտել է հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրան, հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա **Ֆ**առկա ուսուցում **Ֆ** <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով **ՖԺ.02.01**:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Գայանե Դալլաքյանի ատենախոսության թեմա հաստատել <<Բարդ նախադասության դասակարգման հիմնախնդիրը հայ քերականագիտության մեջ>> **ՖԺ.02.01** <<Հայոց լեզու>>:

2. Գայանե Դալլաքյանի ատենախոսության գիտական ղեկավար հաստատել Բ. Գ. ղ., դոց. Փառանձեմ Մելիքիսանյանին:

զ/ **ԼՄԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն ամբիոնի դոցենտ Վ. Պետրոսյանի առաջարկը՝ գիտխորհրդի քվեարկության դնել հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն ամբիոնի գծով ձևավորված ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողովի նախագահի փոփոխության օրինականության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ս. Ավետյանը, Ն. Դիլբարյանը և ուրիշներ:

Դոց. Վ. Պետրոսյանը իր ելույթում նշեց, որ ընդհանուր և համեմատական լեզվաբանության գծով ձևավորվել է նոր հանձնաժողով, որի նախագահ նշանակվել է պրոֆ. Ա. Աբաջյանը, որը այդ մասնագիտական դասիչով չունի գիտական աստիճան: Պրոֆ. Ա. Ավագյանը նշեց, որ նոր հանձնաժողովի ձևավորման առաջարկ ներկայացնում է ասպիրանտուրայի բաժինը, և ինչպես այդ, այնպես էլ մյուս մասնագիտությունների գծով ֆակուլտետը ներկայացրել է հանձնաժողովների նոր կազմեր: Այդ նոր հանձնաժողովի նախագահ է նշանակվել պրոֆ. Ա. Աբաջյանը, իսկ

դոց. Վ. Պետրոսյանը որպես անդամ ընդգրկվել է այդ հանձնաժողովի կազմում: Պրոֆ. Ա. Ավագյանը հավելեց նաև, որ տվյալ մասնագիտական դասիչով պաշտպանած չլինելը չի խանգարում պրոֆ. Ա. Աբաջյանին լինել այդ հանձնաժողովի նախագահ, քանի որ կանոնակարգում այդպիսի նշում չկա: Դոցենտ Վ. Պետրոսյանը առաջարկեց գիտխորհրդի քվեարկության դնել հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն ամբիոնի գծով ձևավորված ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողովի նախագահի փոփոխության օրինականության հարցը: Բաց քվեարկության արդյունքներով այդ առաջարկին կողմ քվեարկեց 1 մարդ, դեմ՝ 26-ը: Քվեարկության արդյունքներից հետո դոցենտ Վ. Պետրոսյանը հայտարարեց, որ դադարեցնում է իր անդամակցությունը այդ ձևավորված հանձնաժողովին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ